ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-061-08.10.2021-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների (գույքի) օտարման, ապրանքների (գույքի) օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքների դիմաց, աշխատավարձերի, կրթաթոշակների, կենսաթոշակների, նպաստների, փոխառությունների, ներկայացուցչական ծախսերի, գործուղման նպատակով կատարվող անկանխիկ ձևով վճարումների, ինչպես նաև անկանխիկ գործառնությունների հետ կապված այլ հարաբերություններ:

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ֆիզիկական անձանց, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպությունների, օտարերկրյա կազմակերպությունների, օտարերկրյա կազմակերպությունների Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների, պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների վրա:
2. Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կնքված (գրավոր և բանավոր) և դրանց դիմաց Հայաստանի Հանրապետության տարածքում փաստացի վճարում նախատեսող (փաստացի վճարված) գործարքների վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված, սակայն Հայաստանի Հանրապետության տարածքում վճարում նախատեսող (փաստացի վճարված) գործարքների վրա:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում կիրառվող հիմնական հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը.
1)անկանխիկ ձևով գործառնություն (վճարում)՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով նախ աձեռնած վճարումներ, որոնք ուղղված են (փոխանցվում են) շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին, կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարումներ, որոնք ու ղղված են (փոխանցվում են) շահառուի (վճար ստացողի) էլեկտրոնային փողի հաշվին: Ընդ որ ում՝ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում է համարվում նախաձեռնողի բանկայի ն կամ էլեկտրոնային փողի հաշվից կատարված վճարումը (փոխանցումը).
2) կրպակ՝ «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված առևտրի օբյեկտի տեսակ.
3) աշխատավարձ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ, ինչպես նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ պայմանագրային եկամուտ.
4) կանխիկ ձևով գործառնություն (վճարում)՝ սույն օրենքով սահմանված անկանխիկ չհանդիսացող վճարումներ.
5) կանխիկ դրամ՝ Հայաստանի Հանրապետության արժույթն ու արտարժույթը թղթադրամների կամ մետաղադրամների տեսքով.
6) ֆիզիկական անձ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ, երկքաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք.
7) կազմակերպություններ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) իրավաբանական անձ, դրա՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ, օտարերկրյա կազմակերպություններ, օտարերկրյա կազմակերպությունների Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումներ.
8) վճարային քարտ կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքեր՝ ՊՈՍ-տերմինալ և այլ նմանատիպ սարքեր, որոնք հնարավորություն ունեն ընդունել անկանխիկ ձևով վճարումներ.
9) անհատ ձեռնարկատեր՝ ըստ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
10) նոտար՝ ըստ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.

11) էլեկտրոնային փող, վճարային քարտ, վճարային գործիք՝ ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
12) փաստաբան՝ ըստ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
13) պետական կառավարման համակարգի մարմիններ՝ ըստ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
14) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ ըստ «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
15) բանկեր՝ ըստ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
16) ապահովագրական ընկերություններ՝ ըստ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
17) վարկային կազմակերպություններ՝ ըստ «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
18) գրավատներ՝ ըստ «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության:

Հոդված 4. Անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների և կազմակերպությունների կողմից անկանխիկ ձևով գործարքների իրականացումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից 2022 թվականի հուլիսի 1-ից՝ 300,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ապրանքների (գույքի) օտարման, ապրանքների (գույքի) օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքով սահմանված պասիվ եկամուտների (այդ թվում՝ տրամադրված և ստացված փոխառություններ և դրանց դիմաց ստացված տոկոսներ)՝ որի մի կողմը ֆիզիկական անձ է, դրանց դիմաց վճարումը և վճարի ստացումը իրականացվում է անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե սույն օրենքով և այլ օրենքներով այդ գործարքների դիմաց վճարման ավելի ցածր սահմանաչափեր և այլ բացառություններ նախատեսված չեն: Բացառություն է կազմում նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից մանրածախ առևտրում սահմանված կարգով դուրս գրված ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվով ձևակերպված ապրանքների ձեռք բերման գործարքները, որոնց դիմաց Հայաստանի Հանրապետության տարածքում կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափը չի կիրառվում:
2. Օտարերկրյա կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների, կազմակերպությունների, ֆիզիկական անձանց միջև իրականացվող ցանկացած գործարքի դիմաց վճարումը և վճարի ստացումը իրականացվում է անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե վճարումը կամ վճարի ստացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:
3. Փաստաբանական ծառայությունների, ինչպես նաև բոլոր խորհրդատվական (հաշվապահական, աուդիտորական, իրավաբանական, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլ խորհրդատվական) ծառայությունների մատուցման վճարների ընդունումը իրականացվում է անկանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:
4. Նոտարական գործողությունների իրականացման կամ նոտարի մատուցած ծառայությունների վճարների ընդունումը իրականացվում է անկանխիկ ձևով: Նոտարական գործողություններ կատարելու համար պետական տուրքը նոտարի կողմից գանձվում է անկանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:
5. Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների և կազմակերպությունների միջև իրականացվող ցանկացած գործարքի դիմաց վճարումը և վճարի ստացումը իրականացվում է անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից:
6. Բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերը և փոխառությունները տրամադրվում են բացառապես անկանխիկ ձևով: Բանկերի կողմից ավանդները կարող են ընդունվել և հետ վերադարձվել (ներառյալ տոկոսները) նաև կանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ պայմանագրով: Բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերը կարող են մարվել (հետ վերադարձվել) նաև կանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ պայմանագրով, իսկ բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված փոխառությունները մարվում (հետ են վերադարձվում) բացառապես անկանխիկ ձևով:
7. Գրավատների կողմից վարկերը տրամադրվում են բացառապես անկանխիկ ձևով՝ 2022 թվականի հուլիսի 1-ից՝ 80,000 ՀՀ դրամից ավելի տրամադրվող վարկերը, 2023 թվականի հունվարի 1-ից՝ 50,000 ՀՀ դրամից ավելի տրամադրվող վարկերը, 2024 թվականի հունվարի 1-ից՝ 20,000 ՀՀ դրամից ավելի տրամադրվող վարկերը:

8. Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները և փաստաբանները իրավունք չունեն անկանխիկ ձևով վճարում նախատեսող ապրանքների (գույքի) օտարման, ապրանքների (գույքի) օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում (պայմանագրերում) կամ գործարքների (պայմանագրերի) առաջարկներում (օֆերտաներում) առաջարկել և (կամ) ստանալ ավելի բարձր գին (արժեք), քան առաջարկում և (կամ) ստանում են կանխիկ ձևով վճարում նախատեսող ապրանքների (գույքի) օտարման, ապրանքների (գույքի) օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում (պայմանագրերում) կամ գործարքների (պայմանագրերի) առաջարկներում (օֆերտաներում):
9. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել սույն օրենքով սահմանված անկանխիկ գործառնությունների համար միջնորդավճարների առավելագույն և նվազագույն սահմանաչափերը, ինչպես նաև դրանց վճարման դեպքերը, կարգը և պայմանները:

Հոդված 5. Ֆիզիկական անձանց միջև անկանխիկ ձևով գործարքների իրականացումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիզիկական անձանց միջև 2022 թվականի հուլիսի 1-ից՝ 500,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող վճարումը և վճարման ստացումը բոլոր այն գործարքների դիմաց, որոնց արդյունքում ծագող իրավունքները ենթակա են պարտադիր գրանցման՝ իրականացվում է անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե այլ օրենքներով այդ գործարքների դիմաց վճարման ավելի ցածր սահմանաչափեր նախատեսված չեն, ինչպես նաև ֆիզիկական անձանց միջև 300,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող փոխառությունների տրամադրումը և ստացումը իրականացվում է անկանխիկ ձևով:
2. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիզիկական անձանց միջև 2023 թվականի հուլիսի 1-ից՝ 300,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող վճարումը և վճարման ստացումը բոլոր գործարքների համար իրականացվում է անկանխիկ ձևով:

Հոդված 6. Աշխատավարձի, կենսաթոշակի և այլ վճարումների կանխիկ ձևով վճարման սահմանափակումները

1. Օրենքով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատավարձերը վճարվում են անկանխիկ ձևով 2022 թվականի հուլիսի 1-ից՝ Երևան քաղաքում գործունեություն իրականացնող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների կողմից, 2023 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում գործունեություն իրականացնող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների կողմից, 2024 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների կողմից: Հաշմանդամության կարգ ունեցող անձի գրավոր դիմումի հիման վրա, նրա աշխատավարձը կարող է վճարվել կանխիկ ձևով:
2. Պետական կամ համայնքային բյուջեներից և այդ բյուջեներ կատարվող ցանկացած վճարում իրականացվում է անկանխիկ ձևով: Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել սույն մասից բացառություն կազմող այն վճարների տեսակները և այդպիսի վճարներ ստացողների առանձին կատեգորիաների ցանկը, որոնք կարող են վճարել կամ որոնց կարող է վճարվել կանխիկ ձևով:
3. Կրթաթոշակները, ներկայացուցչական ծախսերի դիմաց կատարվող վճարումները, գործուղման նպատակով կատարվող վճարումները, պետական գնումների հետ կապված վճարումները կատարվում են անկանխիկ ձևով սկսած 2022 թվականի հուլիսի 1-ից՝ Երևան քաղաքում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից, 2023 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից, 2024 թվականի հուլիսի 1-ից՝ այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից:
4. Սկսած 2022 թվականի հուլիսի 1-ից՝ Երևան քաղաքում, 2023 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում, 2024 թվականի հուլիսի 1-ից՝ այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող բժշկական կազմակերպություններում (հաստատություններում)՝ մատուցված բոլոր բժշկական ծառայությունների դիմաց կատարվող վճարներն ընդունվում են անկանխիկ ձևով:
5. Սկսած 2022 թվականի հուլիսի 1-ից՝ Երևան քաղաքում, 2023 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում, 2024 թվականի հուլիսի 1-ից՝ այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող ուսումնական (այդ թվում՝ բարձրագույն ուսումնական) հաստատություններում՝ մատուցված բոլոր կրթական ծառայությունների դիմաց կատարվող վճարներն ընդունվում են անկանխիկ ձևով:
6. Ապահովագրական հատուցումները կատարվում են անկանխիկ ձևով:

7. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց գործունեության հետ կապված բոլոր գործառնությունները (վճարումները/վճարումների ստացումը) սկսած 2022 թվականի հուլիսի 1-ից իրականացնում են անկանխիկ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից սահմանված դեպքերի:
8. Կենսաթոշակները, կենսաթոշակների համար սահմանված կարգով վճարվող՝ պետական նպաստները և այլ դրամական վճարները, ինչպես նաև խնամքի նպաստը վճարվում է «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով: «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով կենսաթոշակը, կենսաթոշակների համար սահմանված կարգով վճարվող՝ պետական նպաստները և այլ դրամական վճարները, ինչպես նաև խնամքի նպաստը կանխիկ ձևով վճարելու համար բացառություններ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համատեղ նորմատիվ իրավական ակտով:

Հոդված 7. Գործարքների (պայմանագրերի) մասնատումը և անվավերությունը.
1. Սույն օրենքի պահանջներից խուսափելու և դրանք չկատարելու նպատակով մասնատված (երկու կամ ավելի մասերի բաժանված) գործարքը /պայմանագիրը/ համարվում է մեկ միասնական գործարք /պայմանագիր/ և վերջիններիս վրա տարածվում են սույն օրենքի դրույթները:
2. Սույն օրենքի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր չէ, սակայն սույն օրենքով սահմանված գումարի չափը գերազանցող կանխիկ ձևով իրականացվող վճարման և վճարման ստացման հետևանքով գործարքի կողմերի միջև վեճ առաջանալու դեպքում՝ վերջիններս զրկվում են ի հաստատումն գործարքի և դրա պայմանների՝ վկայի ցուցմունքները վկայակոչելու իրավունքից:

Հոդված 8. Արտարժույթով արտահայտված գործարքի (պայմանագրերի) և սույն օրենքով սահմանված վճարների հաշվարկը

1. Սույն օրենքով սահմանված վճարները՝ բացառությամբ քարտային կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներով կատարված վճարումների, արտարժույթով վճարելիս դրանց հաշվարկը սույն օրենքով սահմանված նպատակներով կատարվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված և հրապարակված միջին փոխարժեքը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Հոդված 9. Վճարային քարտեր ընդունող սարքերի կիրառումը
1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ հսկիչ դրամարկղային մեքենաներ կիրառելու պարտավորություն ունեցող, այդ թվում՝ օդային տրանսպորտով կատարվող ուղևորափոխադրումների տոմսերի վաճառք իրականացնող սուբյեկտները պետք է ունենան և հաճախորդի ցանկությամբ ապահովեն վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով վճարման ընդունում՝ բացառությամբ կրպակների:
2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել այն պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասում չնշված սուբյեկտների ցանկը, որտեղ պարտադիր տեղադրվում և կիրառվում են վճարային քարտեր կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքեր:
3. Վճարային քարտեր կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքերի անսարքության դեպքում՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ սեղմ ժամկետներ նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված սուբյեկտները պարտավոր են վերանորոգել կամ փոխարինել տվյալ սարքը: Եթե վճարային քարտերով կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներով վճարման ընդունումն իրականացվում է հսկիչ դրամարկղային մեքենաներ կիրառելու միջոցով, ապա դրանց անսարքության դեպքում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված սուբյեկտները պետք է առաջնորդվեն Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ հաստատված կանոններով:
4. Վճարային քարտեր կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքերի սպասարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և/կամ համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով:
5. Վճարային քարտեր կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքերի և/կամ հսկիչ դրամարկղային մեքենաների վերաբերյալ, ինչպես նաև անկանխիկ գործառնությունների հետ կապված այլ տեղեկությունների փոխանակումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի միջև իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի համատեղ նորմատիվ իրավական ակտով:

ԳԼՈՒԽ 2
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 10. Սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների նկատմամբ վերահսկողությունը

1. Կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների, ֆիզիկական անձանց և նոտարների կողմից սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված, գրանցված և (կամ) վերահսկվող անձանց նկատմամբ իրականացվող վերահսկողության և աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքերի: Ընդ որում կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների և փաստաբանների միջև գործարքների դեպքում «Անկանխիկ գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ այդ օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելն առաջացնում է պատասխանատվություն գործարքի բոլոր կողմերի համար, իսկ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների և ֆիզիկական անձանց միջև գործարքների դեպքում՝ պատասխանատվություն է առաջանում միայն կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների համար, բացառությամբ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքերի:
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված, գրանցված և (կամ) վերահսկվող անձանց կողմից սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների՝ որոնք պարունակում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր, պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը:

Հոդված 11. Սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի խախտման համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի կամ սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները՝ բացառությամբ այն նորմերի, որոնք պարունակում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների կողմից խախտելու համար կիրառվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված պատասխանատվություն, իսկ ֆիզիկական անձանց կողմից սույն օրենքի կամ սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցներ:
2. Սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները՝ որոնք պարունակում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների, նոտարների և ֆիզիկական անձանց կողմից խախտելու համար կիրառվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցներ:

ԳԼՈՒԽ 3
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 12. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից և տարածվում է ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I-Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների *օտարման,* (գույքի) օտարման, ապրանքների *օգտագործման,* (գույքի) օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքների դիմաց, աշխատավարձերի, կրթաթոշակների, կենսաթոշակների, նպաստների, փոխառությունների, ներկայացուցչական ծախսերի, գործուղման նպատակով կատարվող անկանխիկ ձևով վճարումների, ինչպես նաև անկանխիկ գործառնությունների հետ կապված այլ հարաբերություններ:

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ֆիզիկական անձանց, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպությունների, օտարերկրյա կազմակերպությունների, օտարերկրյա կազմակերպությունների Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների, պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների վրա:
2. Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կնքված (գրավոր և բանավոր) և դրանց դիմաց Հայաստանի Հանրապետության տարածքում փաստացի վճարում նախատեսող (փաստացի վճարված) գործարքների վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված, սակայն Հայաստանի Հանրապետության տարածքում վճարում նախատեսող (փաստացի վճարված) գործարքների վրա:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում կիրառվող հիմնական հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը.
1) ~~անկանխիկ ձևով գործառնություն (վճարում)՝ վճարումներ, որոնք ուղղված են (փոխանցվում են) շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին կամ էլեկտրոնային փողի հաշվին.~~
անկանխիկ ձևով գործառնություն (վճարում)՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարումներ, որոնք ուղղված են (փոխանցվում են) շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին, կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարումներ, որոնք ուղղված են (փոխանցվում են) շահառուի (վճար ստացողի) էլեկտրոնային փողի հաշվին: Ընդ որում՝ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում է համարվում նախաձեռնողի բանկային կամ էլեկտրոնային փողի հաշվից կատարված վճարումը (փոխանցումը).
2) կրպակ՝ «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված առևտրի օբյեկտի տեսակ,
3) աշխատավարձ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ, ինչպես նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ պայմանագրային եկամուտ:
4) կանխիկ ձևով գործառնություն (վճարում)՝ սույն օրենքով սահմանված անկանխիկ չհանդիսացող վճարումներ.
5) կանխիկ դրամ՝ Հայաստանի Հանրապետության արժույթն ու արտարժույթը թղթադրամների կամ մետաղադրամների տեսքով.
6) ֆիզիկական անձ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ, երկքաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք.
7) կազմակերպություններ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) իրավաբանական անձ, դրա՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ, օտարերկրյա կազմակերպություններ, օտարերկրյա կազմակերպությունների Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումներ.
8) վճարային քարտ կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքեր՝ ՊՈՍ-տերմինալ և այլ նմանատիպ սարքեր, որոնք հնարավորություն ունեն ընդունել անկանխիկ ձևով վճարումներ.
9) անհատ ձեռնարկատեր՝ ըստ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
10) նոտար՝ ըստ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.

11) էլեկտրոնային փող, վճարային քարտ, վճարային գործիք՝ ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության:
12) փաստաբան՝ ըստ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
13) պետական կառավարման համակարգի մարմիններ՝ ըստ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
14) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ ըստ «Տեղական ինքնակառավարման մարմինների~~»~~ մասին*»* Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
15) բանկեր՝ ըստ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
16) ապահովագրական ընկերություններ՝ ըստ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
17) վարկային կազմակերպություններ՝ ըստ «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.
18) գրավատներ՝ ըստ «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության:

Հոդված 4. Անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների և կազմակերպությունների կողմից անկանխիկ ձևով գործարքների իրականացումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից 2022 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ 300,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ապրանքների *օտարման,* ~~(գույքի)~~ օտարման, ապրանքների *օգտագործման,* ~~(գույքի)~~ օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքով սահմանված պասիվ եկամուտների (այդ թվում՝ տրամադրված և ստացված փոխառություններ և դրանց դիմաց ստացված տոկոսներ)՝ որի մի կողմը ֆիզիկական անձ է, դրանց դիմաց վճարումը և վճարի ստացումը իրականացվում է անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե սույն օրենքով և այլ օրենքներով այդ գործարքների դիմաց վճարման ավելի ցածր սահմանաչափեր և այլ բացառություններ նախատեսված չեն: Բացառություն է կազմում նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից մանրածախ առևտրում սահմանված կարգով դուրս գրված ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվով ձևակերպված ապրանքների ձեռք բերման գործարքները, որոնց դիմաց Հայաստանի Հանրապետության տարածքում կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափը չի կիրառվում:
2. Օտարերկրյա կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների, կազմակերպությունների, ֆիզիկական անձանց միջև իրականացվող ցանկացած գործարքի դիմաց վճարումը և վճարի ստացումը իրականացվում է անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե վճարումը կամ վճարի ստացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

~~3. Փաստաբանական ծառայությունների մատուցման վճարների ընդունումը իրականացվում է անկանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:~~ *Փաստաբանական ծառայությունների, ինչպես նաև բոլոր խորհրդատվական (հաշվապահական, աուդիտորական, իրավաբանական, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլ խորհրդատվական) ծառայությունների մատուցման վճարների ընդունումը իրականացվում է անկանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:*
4. Նոտարական գործողությունների իրականացման կամ նոտարի մատուցած ծառայությունների վճարների ընդունումը իրականացվում է անկանխիկ ձևով: Նոտարական գործողություններ կատարելու համար պետական տուրքը նոտարի կողմից գանձվում է անկանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:
5. Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների և կազմակերպությունների միջև իրականացվող ցանկացած գործարքի դիմաց վճարումը և վճարի ստացումը իրականացվում է անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից:
6. Բանկերի, վարկային կազմակերպությունների~~, ինչպես նաև լիցենզիայի հիման վրա վարկեր և փոխառություններ տրամադրելու իրավունք ունեցող անձանց~~ կողմից տրամադրվող վարկերը և փոխառությունները տրամադրվում են բացառապես անկանխիկ ձևով: Բանկերի կողմից ավանդները կարող են ընդունվել և հետ վերադարձվել (ներառյալ տոկոսները) նաև կանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ պայմանագրով: *Բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերը կարող են մարվել (հետ վերադարձվել) նաև կանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ պայմանագրով, իսկ բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված փոխառությունները մարվում (հետ են վերադարձվում) բացառապես անկանխիկ ձևով:*

7. ~~Գրավատների կողմից 20,000 ՀՀ դրամից ավելի վարկերը տրամադրվում են բացառապես անկանխիկ ձևով:~~ *Գրավատների կողմից վարկերը տրամադրվում են բացառապես անկանխիկ ձևով՝ 2022 թվականի հուլիսի 1-ից՝ 80,000 ՀՀ դրամից ավելի տրամադրվող վարկերը, 2023 թվականի հունվարի 1-ից՝ 50,000 ՀՀ դրամից ավելի տրամադրվող վարկերը, 2024 թվականի հունվարի 1-ից՝ 20,000 ՀՀ դրամից ավելի տրամադրվող վարկերը:*
8. Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները և փաստաբանները իրավունք չունեն անկանխիկ ձևով վճարում նախատեսող ապրանքների *օտարման,* ~~(գույքի)~~ օտարման, ապրանքների *օգտագործման,* ~~(գույքի)~~ օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում (պայմանագրերում) կամ գործարքների (պայմանագրերի) առաջարկներում (օֆերտաներում) առաջարկել և (կամ) ստանալ ավելի բարձր գին (արժեք), քան առաջարկում և (կամ) ստանում են կանխիկ ձևով վճարում նախատեսող ապրանքների *օտարման,* ~~(գույքի)~~ օտարման, ապրանքների *օգտագործման,* ~~(գույքի)~~ օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում (պայմանագրերում) կամ գործարքների (պայմանագրերի) առաջարկներում (օֆերտաներում):
9. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել սույն օրենքով սահմանված անկանխիկ գործառնությունների համար միջնորդավճարների առավելագույն և նվազագույն սահմանաչափերը, ինչպես նաև դրանց վճարման դեպքերը, կարգը և պայմանները:

Հոդված 5. Ֆիզիկական անձանց միջև անկանխիկ ձևով գործարքների իրականացումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիզիկական անձանց միջև 2022 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ 500,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող վճարումը և վճարման ստացումը բոլոր այն գործարքների դիմաց, որոնց արդյունքում ծագող իրավունքները ենթակա են պարտադիր գրանցման՝ իրականացվում է անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե այլ օրենքներով այդ գործարքների դիմաց վճարման ավելի ցածր սահմանաչափեր նախատեսված չեն, ինչպես նաև ֆիզիկական անձանց միջև 300,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող փոխառությունների տրամադրումը և ստացումը իրականացվում է անկանխիկ ձևով:
2. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիզիկական անձանց միջև 2023 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ 300,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող վճարումը և վճարման ստացումը բոլոր գործարքների համար իրականացվում է անկանխիկ ձևով:

Հոդված 6. Աշխատավարձի, կենսաթոշակի և այլ վճարումների կանխիկ ձևով վճարման սահմանափակումները

1. Օրենքով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատավարձերը վճարվում են անկանխիկ ձևով 2022 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ Երևան քաղաքում գործունեություն իրականացնող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների կողմից, 2023 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում գործունեություն իրականացնող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների կողմից, 2024 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների կողմից: Հաշմանդամության կարգ ունեցող անձի գրավոր դիմումի հիման վրա, նրա աշխատավարձը կարող է վճարվել կանխիկ ձևով:
2. Պետական կամ ~~տեղական~~ *համայնքային* բյուջեներից և այդ բյուջեներ կատարվող ցանկացած վճարում իրականացվում է անկանխիկ ձևով: Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել սույն մասից բացառություն կազմող այն վճարների տեսակները և այդպիսի վճարներ ստացողների առանձին կատեգորիաների ցանկը, որոնք կարող են վճարել կամ որոնց կարող է վճարվել կանխիկ ձևով:
3. Կրթաթոշակները, ներկայացուցչական ծախսերի դիմաց կատարվող վճարումները, գործուղման նպատակով կատարվող վճարումները, պետական գնումների հետ կապված վճարումները կատարվում են անկանխիկ ձևով սկսած 2022 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ Երևան քաղաքում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից, 2023 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից, 2024 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից:
4. Սկսած 2022 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ Երևան քաղաքում, 2023 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում, 2024 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող բժշկական կազմակերպություններում (հաստատություններում)՝ մատուցված *բոլոր* բժշկական ծառայությունների ~~բոլոր տեսակի~~ դիմաց կատարվող վճարներն ընդունվում են անկանխիկ ձևով:
5. Սկսած 2022 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ Երևան քաղաքում, 2023 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում, 2024 թվականի

~~հունվարի~~ հուլիսի 1-ից՝ այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող ~~կրթական~~ *ուսումնական (այդ թվում՝ բարձրագույն ուսումնական)* հաստատություններում՝ մատուցված *բոլոր* կրթական ծառայությունների ~~բոլոր տեսակի~~ դիմաց կատարվող վճարներն ընդունվում են անկանխիկ ձևով:

6. Ապահովագրական հատուցումները կատարվում են անկանխիկ ձևով:

7. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց գործունեության հետ կապված բոլոր գործառնությունները (վճարումները/վճարումների ստացումը) սկսած 2022 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից իրականացնում են անկանխիկ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից սահմանված դեպքերի:

8. Կենսաթոշակները, կենսաթոշակների համար սահմանված կարգով վճարվող՝ պետական նպաստները և այլ դրամական վճարները, ինչպես նաև խնամքի նպաստը վճարվում է «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով: «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով կենսաթոշակը, կենսաթոշակների համար սահմանված կարգով վճարվող՝ պետական նպաստները և այլ դրամական վճարները, ինչպես նաև խնամքի նպաստը կանխիկ ձևով վճարելու համար բացառություններ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համատեղ նորմատիվ իրավական ակտով:

~~9. Սույն օրենքի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր չէ, սակայն սույն օրենքով սահմանված գումարի չափը գերազանցող կանխիկ ձևով իրականացվող վճարման և վճարման ստացման հետևանքով գործարքի կողմերի միջև վեճ առաջանալու դեպքում՝ վերջիններս զրկվում են ի հաստատումն գործարքի և դրա պայմանների՝ վկայի ցուցմունքները վկայակոչելու իրավունքից:~~

Հոդված 7. Գործարքների (պայմանագրերի) մասնատումը *և անվավերությունը*.

1. Սույն օրենքի պահանջներից խուսափելու և դրանք չկատարելու նպատակով մասնատված (երկու կամ ավելի մասերի բաժանված) գործարքը /պայմանագիրը/ համարվում է մեկ միասնական գործարք /պայմանագիր/ և վերջիններիս վրա տարածվում են սույն օրենքի դրույթները:

2. Սույն օրենքի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր չէ, սակայն սույն օրենքով սահմանված գումարի չափը գերազանցող կանխիկ ձևով իրականացվող վճարման և վճարման ստացման հետևանքով գործարքի կողմերի միջև վեճ առաջանալու դեպքում՝ վերջիններս զրկվում են ի հաստատումն գործարքի և դրա պայմանների՝ վկայի ցուցմունքները վկայակոչելու իրավունքից:

Հոդված 8. Արտարժույթով արտահայտված գործարքի (պայմանագրերի) և սույն օրենքով սահմանված վճարների հաշվարկը

1. Սույն օրենքով սահմանված վճարները *արտարժույթով վճարելիս՝* բացառությամբ քարտային *վճարների կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներով* կատարված վճարումների, արտարժույթով վճարելիս դրանց հաշվարկը սույն օրենքով սահմանված նպատակներով կատարվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ~~մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ն~~ *սահմանված և* հրապարակված միջին փոխարժեքը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Հոդված 9. Վճարային քարտեր ընդունող սարքերի կիրառումը

1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ հսկիչ դրամարկղային մեքենաներ կիրառելու պարտավորություն ունեցող*, ինչպես նաև՝ օդային տրանսպորտով կատարվող ուղևորափոխադրումների տոմսերի վաճառք իրականացնող* սուբյեկտները պետք է ունենան և հաճախորդի ցանկությամբ ապահովեն վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով վճարման ընդունում՝ բացառությամբ կրպակների:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել այն պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասում չնշված սուբյեկտների ցանկը, որտեղ պարտադիր տեղադրվում և կիրառվում են վճարային քարտեր կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքեր:

3. Վճարային քարտեր կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքերի անսարքության դեպքում՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում*, եթե այլ սեղմ ժամկետներ նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով,* սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված սուբյեկտները պարտավոր են վերանորոգել կամ փոխարինել տվյալ սարքը: Եթե վճարային քարտերով կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներով վճարման ընդունումն իրականացվում է հսկիչ դրամարկղային մեքենաներ կիրառելու միջոցով, ապա դրանց անսարքության դեպքում ~~տնտեսավարողները~~ *սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված սուբյեկտները* պետք է առաջնորդվեն Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ հաստատված կանոններով:

4. Վճարային քարտեր կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքերի սպասարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և/կամ համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով:

5. Վճարային քարտեր կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքերի և/կամ հսկիչ դրամարկղային մեքենաների վերաբերյալ, ինչպես նաև

անկանխիկ գործառնությունների հետ կապված այլ տեղեկությունների փոխանակումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի միջև իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի համատեղ նորմատիվ իրավական ակտով:

ԳԼՈՒԽ-Ի2
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 10. Սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների նկատմամբ վերահսկողությունը

1. Կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների, ֆիզիկական անձանց և նոտարների կողմից սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված, գրանցված և (կամ) վերահսկվող անձանց նկատմամբ իրականացվող վերահսկողության և աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքերի: Ընդ որում կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների և փաստաբանների միջև գործարքների դեպքում «Անկանխիկ գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ այդ օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելն առաջացնում է պատասխանատվություն գործարքի *բոլոր կողմերի*~~կողմ հանդիսացող բոլոր կազմակերպությունների, փաստաբանների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների~~ համար, իսկ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների և ֆիզիկական անձանց միջև գործարքների դեպքում՝ պատասխանատվություն է առաջանում միայն կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների համար, բացառությամբ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքերի:
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված, գրանցված և (կամ) վերահսկվող անձանց կողմից սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների՝ որոնք պարունակում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր, պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը:

Հոդված 11. Սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի խախտման համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի կամ սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները՝ բացառությամբ այն նորմերի, որոնք պարունակում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների կողմից խախտելու համար կիրառվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված պատասխանատվություն, իսկ ֆիզիկական անձանց կողմից սույն օրենքի կամ սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցներ:
2. Սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները՝ որոնք պարունակում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների, նոտարների և ֆիզիկական անձանց կողմից խախտելու համար կիրառվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցներ:

ԳԼՈՒԽ Ի3
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 12. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից և տարածվում է ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-061-08.10.2021-ՖՎ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**Աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 2-րդ մաս**	Օրենսգրքով նախատեսված աշխատավարձերի կարգավորումների մասով: Բացի այդ, «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի և «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծերի ընդունման դեպքում կստացվի, որ աշխատողներին աշխատավարձը կարող է վճարվել ինչպես արժույթով, այնպես էլ՝ արտարժույթով: Մինչդեռ, հարկ է նկատել, որ Օրենսգրքի 192-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության գործող կարգավորումներով սահմանված է **սահմանափակում առ այն, որ աշխատավարձը վճարվում է ՀՀ արժույթով** և կարող է վճարվել կանխիկ կամ անկանխիկ՝ բանկային վկայագրով, չեկերով կամ աշխատողի նշած բանկային հաշվին դրամական փոխանցումով: Գործող կարգավորումներով, աշխատավարձի վճարումը միայն ՀՀ արժույթով սահմանելն ինքնանպատակ չէ, այն բխում է աշխատողների կենսապահովման պայմանների հարցում որոշակի կայունություն ապահովելու, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքների տատանումներից աշխատողների ապրուստի միջոցները պահպանելու նպատակադրումից: Այն ապահովված է նաև միջազգային իրավունքի նորմերով:	Առաջարկությունն ընդունվել է մասնակի, մասնավորապես՝ սահմանվել է, որ աշխատավարձը վճարվելու է միայն ՀՀ դրամով, իսկ ինչ վերաբերում է վճարման կարգին, հաշվի առնելով կարգավորումների միասեռ լինելու հանգամանքը՝ այն կարգավորվել է Նախագծով, և կարծում ենք կիրառման տեսանկյունից որևէ խնդիր առկա չէ:	Ընդունվել է

2.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 9-րդ մաս**	«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 6-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսվում են «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջներին չհամապատասխանող գործարքի անվավերության վերաբերյալ կարգավորումներ: Նկատի ունենալով, որ նշված հոդվածը վերաբերում է աշխատավարձի, կենսաթոշակի և այլ վճարումների կանխիկ ձևով վճարման սահմանափակումներին՝ գտնում ենք, որ նշված կարգավորումները դուրս են տվյալ հոդվածի կարգավորման առարկայի շրջանակներից:	Առաջարկությունն ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
3.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մաս**	Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների և փաստաբանների միջև գործարքների դեպքում Օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելն առաջացնում է պատասխանատվություն գործարքի կողմ հանդիսացող բոլոր կազմակերպությունների, փաստաբանների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար, իսկ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների և ֆիզիկական անձանց միջև գործարքների դեպքում՝ պատասխանատվություն է առաջանում միայն կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների համար, բացառությամբ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքերի: Նշված դրույթում «գործարքի կողմ հանդիսացող բոլոր կազմակերպությունների, փաստաբանների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար»	Առաջարկությունն ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «գործարքի բոլոր կողմերի համար» ձևակերպմամբ:		
4.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված**	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածում «2-րդ կետի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2-րդ մասի» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի դրույթները: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», ««Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», ««Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկություններ չունենք:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
5.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով լրացվող 165.10-րդ հոդվածի 1-ին մաս**	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով լրացվող 165.10-րդ հոդվածի 1-ին մասում «նորմեր պարունակող նորմերը» բառերը փոխարինել «նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները» բառերով:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

6.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մաս**	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «ուղղված են» բառերից հետո լրացնել «(փոխանցվում են)» բառերը: 14-րդ կետում «մարմինների» մասին» բառերի փոխարեն շարադրել «մարմիններին մասին»» բառերը:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
7.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ մաս**	Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ մասում «վարկային կազմակերպությունների» բառերից հետո հանել «, ինչպես նաև լիցենզիայի հիման վրա վարկեր և փոխառություններ տրամադրելու իրավունք ունեցող անձանց» բառերը: Ինչպես նաև լրացնել «Բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերը կարող են մարվել (հետ վերադարձվել) նաև կանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ պայմանագրով, իսկ բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված փոխառությունները մարվում (հետ են վերադարձվում) բացառապես անկանխիկ ձևով:» նախադասությունը:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
8.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդված**	Նախագծի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «8. Սույն օրենքով սահմանված վճարները՝ բացառությամբ քարտային կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներով կատարված վճարումների, արտարժույթով վճարելիս դրանց հաշվարկը սույն օրենքով սահմանված նպատակներով կատարվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված և հրապարակված միջին փոխարժեքը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:»:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

9.	Հայաստանի Հանրապետության կառավարություն		Նախագծերի փաթեթում «հունվարի 1-ից» բառերը փոխարինել «հուլիսի 1-ից» բառերով:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
10.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված**	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «տեղական» բառը փոխարինել «համայնքային» բառով: 4-րդ և 5-րդ մասերում «մատուցված բժշկական ծառայությունների բոլոր տեսակի» բառերը փոխարինել «մատուցված բոլոր բժշկական ծառայությունների» բառերով: 5-րդ մասում «կրթական» բառը փոխարինել «ուսումնական (այդ թվում՝ բարձրագույն ուսումնական)» բառերով:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
11.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 142-րդ հոդված**	Քաղաքացիական օրենսգրքի 142-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Հայաստանի Հանրապետության տարածքում վճարները կատարվում են կանխիկ և անկանխիկ հաշվարկներով: Օրենքով կարող են սահմանվել կանխիկ հաշվարկների կատարման սահմանափակումներ:»:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
12.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդված**	Աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Աշխատավարձը վճարվում է Հայաստանի Հանրապետության արժույթով՝ կանխիկ կամ անկանխիկ ձևով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:»:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
13.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենքի 165^{10}-րդ հոդված**	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենքի 165^{10}-րդ հոդվածի 1-ին մասում «պարունակող նորմերը» բառերը փոխարինել «պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները» բառերով:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

14.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ**	«Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծում «ՀՀ» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով: Նախագծի 2-րդ հոդվածում «զ) ենթակետը» բառերը փոխարինել ««զ» ենթակետը» բառերով:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
15.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մաս**	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասում «պարտավորություն ունեցող» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ օդային տրանսպորտով կատարվող ուղևորափոխադրումների տոմսերի վաճառք իրականացնող,» բառերը:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
16.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետ**	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1)անկանխիկ ձևով գործառնություն (վճարում)՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարումներ, որոնք ուղղված են (փոխանցվում են) շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին, կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարումներ, որոնք ուղղված են (փոխանցվում են) շահառուի (վճար ստացողի) էլեկտրոնային փողի հաշվին: Ընդ որում՝ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում է համարվում նախաձեռնողի բանկային կամ էլեկտրոնային փողի հաշվից կատարված վճարումը (փոխանցումը)»:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
17.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մաս**	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասում ավելացնել նաև բոլոր խորհրդատվական ծառայություն մատուցող անձանց:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

18.	«Հայաստանի հաշվապահների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն 08.12.2021 թվականի թիվ Կ-01		Հաշվի առնելով «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու սեղմ ժամկետը, հանրային քննարկման և հարկ վճարողների իրազեկվածության բացակայությունը, ինչպես նաև հարկ վճարողների կողմից վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով վճարման ընդունումն ապահովելու հետ կապված մի շարք դժվարությունները (ժամանակային, ֆինանսական)՝ առաջարկում ենք օրենքի դրույթների կամ պատասխանատվության միջոցների կիրառման համար նախատեսել անցումային ժամանակահատված:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
19.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մաս**	Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Վճարային քարտեր կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքերի անսարքության դեպքում՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ սեղմ ժամկետներ նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված սուբյեկտները պարտավոր են վերանորոգել կամ փոխարինել տվյալ սարքը: Եթե վճարային քարտերով կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներով վճարման ընդունումն իրականացվում է հսկիչ դրամարկղային մեքենաներ կիրառելու միջոցով, ապա դրանց անսարքության դեպքում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված սուբյեկտները պետք է առաջնորդվեն Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ հաստատված կանոններով:»:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

20.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված**	Նախագծի 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ մասով. «2. Օտարերկրյա կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների, կազմակերպությունների, ֆիզիկական անձանց միջև իրականացվող ցանկացած գործարքի դիմաց վճարումը և վճարի ստացումը իրականացվում է անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե վճարումը կամ վճարի ստացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:»:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
21.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի 1-ին և 4-րդ հոդվածներ**	Նախագծի 1-ին և 4-րդ հոդվածներում «ապրանքների (գույքի) օտարման, ապրանքների (գույքի) օգտագործման» բառերը փոխարինել «ապրանքների օտարման, գույքի օտարման, ապրանքների օգտագործման, գույքի օգտագործման» բառերով:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
22.	ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, պատգամավոր Գևորգ Պապոյան	**«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 6-րդ մաս**	Նախագծի 4-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6. Գրավատների կողմից վարկերը տրամադրվում են բացառապես անկանխիկ ձևով՝ 2022 թվականի հուլիսի 1-ից՝ 80000 ՀՀ դրամից ավելի տրամադրվող վարկերը, 2023 թվականի հունվարի 1-ից՝ 50000 ՀՀ դրամից ավելի տրամադրվող վարկերը, 2024 թվականի հունվարի 1-ից՝ 30000 ՀՀ դրամից ավելի տրամադրվող վարկերը:»:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է